



ՇՆՉԱՌԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՏԱՆԸ

ԼՎԱՅԵՔ ԶԵՐ ԶԵՌՔԵՐԸ ԼԱՎ ԵՎ ՀԱՃԱՆ



- Հաճախակի լվացեք ձեռքերը օճառով և ջրով՝ առնվազն 20 վայրկյան:
- Եթե ձեռքի տակ չունեք ջուր և օճառ, ապաօգտագործեք առնվազն 60% սպիրտային հիմքով ախտահանիչ կյուլթ:
- Ձեռքերը լվացեք աղբի դույլը դատարկելուց հետո, օգտագործված անձեռոցիկների ձեռք տալուց և նմանատիպ դեպքերից հետո:

ԿԱՐԴԱՅԵՔ ՄԱՔՐՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԻՏԱԿՆԵՐԸ



- Հետևեք ապրանքների պիտակների վրա նշված ցուցումներին, ներառյալ՝ ձեռնոցներ հագնելը և լավ օդափոխությունը:
- Օգտագործեք տան համար նախատեսված մաքրող ապրանքներ և Շրջակա միջավայրի պաշտպանության գործակալության (EPA) կողմից գրանցված ախտահանիչներ, որոնք կիրառելի են տվյալ մակերեսի համար:
- Որպեսզի իմանաք, թե արդյոք տվյալ ապրանքը ոչնչացնում է վիրուսները, կարդացեք ապրանքի պիտակը, զանգահարեք պիտակի վրայի 1-800 համարով կամ այցելեք <http://www.americanchemistry.com/Novel-Coronavirus-Fighting-Products-List.pdf> կայքը:
- Սպիտակեցնող լուծույթը (քլոր) նույնպես կարելի է օգտագործել որպես ախտահանիչ՝ խառնելով 1 ճաշի գդալ սպիտակեցնող հեղուկը 4 բաժակ ջրի հետ, կամ ավելի մեծ քանակի համար՝ ¼ բաժակ սպիտակեցնող հեղուկը 1 գալոն (16 բաժակ) ջրի հետ:

ՄԱՔՐԵՔ ԵՎ ԱՆՏԱՀԱՆՔԸ ՀԱՃԱՆԱԿԻ ԶԵՌՔ ՏՐԿՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ՈՒ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԸ



Պինդ (Ոչ-ծակոտկեն) մակերեսներ

Օր.՝ հաճախակի ձեռք տրվող մակերեսները, ինչպիսիք են՝ սեղանները, դռների բռնակները, վանդակաճաղերը, բաղնիքի հարմարանքները, լույսի անջատիչները, զուգարանները, հեռախոսները, ստեղնաշարերը, հեռակառավարման վահանակները, պլանշետները և անկողնուն կից սեղանիկները:

- Մաքրեք մակերեսները և իրերը՝ հեռացնելու համար տեսանելի կեղտը և աղտահանելու դրանք՝ սպանելով մանրէներին: Ախտահանիչներ օգտագործելիս, համոզվեք, որ մակերեսը թաց է մնում առնվազն 10 րոպե, որից հետո մաքրեք ջրով, հատկապես այն տեղերում, որտեղ մնալի հետ շփում կա: Թողեք չորանա:
- Էլեկտրական սարքերի վրա ախտահանող անձեռոցիկներ օգտագործելիս ուշադիր կարդացեք ցուցումները՝ համոզվելու, որ դրանք կոխման մի քանի անգամ թաց անձեռոցիկով մաքրելու, որից հետո մակերեսը պահանջվող տևողությամբ թաց մնա:

Փափուկ (ծակոտկեն) մակերեսներ

Օր.՝ սրբիչներ, անկողին, հագուստ և փափուկ խաղալիքներ:

- Լվացեք տաք ջրով՝ օգտագործելով տնային օգտագործման լվացքի կյուլթ և չորացրեք բարձր ջերմաստիճանում:

ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



CDC ուղեցույցը կորոնավիրուս 2019 հիվանդությամբ գրանցված կամ կասկածվող տների մաքրման և ախտահանման համար:

<https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/community/home/cleaning-disinfection.html#disinfect>

Հանրային առողջապահական ուղեցույց՝ ձեռքերը ճիշտ լվալու վերաբերյալ :

<http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/> (սեղմեք ձեռքերը լվանալու տեղեկատվությանը)

